ՀԿԴ/0037/01/22
(ԵԴ/0899/01/22)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 սեպտեմբերի 2022 թվական ք.Երևան

Ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0037/01/22 (ԵԴ/0899/01/22) քրեական գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի հունիսի 7-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել թիվ ԵԴ/0899/01/22 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Կարո Տիգրանի Ավանեսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 1-ին մասով, որը 2022 թվականի հունիսի 8-ին ընդունվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան գործուղված Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս.Գզոգյանի վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունիսի 15-ի որոշմամբ թիվ ԵԴ/0899/01/22 քրեական գործը 2022 թվականի հունիսի 23-ին նշանակվել է դատական քննության:

Նշված դատական նիստը ամբաստանյալի չներկայանալու պատճառով տեղի չի ունեցել և հետաձգվել է 2022 թվականի հունիսի 28-ին:

2022 թվականի հունիսի 28-ին կայացած դատական նիստի ժամանակ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն որոշել է դատական քննությունը անցկացնել համաձայնեցման կարգով:

Հաջորդ դատական նիստը նշանակվել է 2022 թվականի հուլիսի 12-ին, սակայն ոչ այդ օրը և ոչ էլ 2022 թվականի օգոստոսի 9-ին նշանակված դատական նիստերը չեն կայացել:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ թիվ ԵԴ/0899/01/22 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Կարո Տիգրանի Ավանեսյանի ուղարկվել է ըստ ընդդատության' ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

2. Թիվ ՀԿԴ/0037/01/22 (ԵԴ/0899/01/22) քրեական գործը 2022 թվականի սեպտեմբերի 2-ին մակագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ա.Գրիգորյանին և նույն օրվա որոշմամբ ընդունվել է վարույթ:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ա.Գրիգորյանը 2022 թվականի սեպտեմբերի 16-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0037/01/22 (ԵԴ/0899/01/22) քրեական գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար գործը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

3. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 20-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս.Գզոգյանը, հղում կատարելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ, 298-րդ հոդվածներին,

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 20-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ մասերին, նշել է, որ թիվ ԵԴ/0899/01/22 քրեական գործով անցում չի կատարվել դատաքննության փուլ, ուստի քրեական գործը պետք է ուղարկվի ըստ ընդդատության՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարան[1]:

5. ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Թիվ ԵԴ/0899/01/22 քրեական գործի նյութերի համաձայն՝ 2022 թվականի հունիսի 28-ին կայացած դատական նիստում արձանագրվել է հետևյալը.*

«(...)

Դատարանը որոշեց դատական քննությունը անցկացնել համաձայնեցման կարգով:

Ամբաստանյալ: Կարո Ավանեսյան: հատուկ կարգով քննեք:

Հարց. Դատավոր: Սուսաննա Գզոգյան: հարգելի մեղադրող ինչ կարծիք ունեք

Պատասխան. Դատախազ: Կորյուն Սերոբյան: նախկինում ես առարկել եմ, քանի որ պաշտպան չի ունեցել, քանի որ հիմա ունի պաշտպան չեմ առարկում.

Դատավոր: Սուսաննա Գզոգյան: հարգելի դատախազ ընթերցեք մեղադրական եզրակացությունը.

Մեղադրողը հրապարակեց մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը.

Դատախազ. Կորյուն Սերոբյան.

Դատավոր: Սուսաննա Գզոգյան: ընդունում եք Ձեզ առաջադրված մեղադրանքը.

Ամբաստանյալ: Կարո Ավանեսյան: ընդունում եմ, մեղավոր եմ ճանաչում.

Դատավոր: Սուսաննա Գզոգյան: հարգելի կողմեր որքան ժամանակ է հարկավոր բանակցությունների համար.

Դատախազ: Կորյուն Սերոբյան: ընդմիջում 5 րոպե որոշելու համար. (…)»

(…)

---

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 43-44:

Այսպիսով՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0037/01/22 (նախկին համարը՝ թիվ ԵԴ/0899/01/22) քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին վերաբաշխման ենթակա չէ և գործի քննությունը պետք է շարունակվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, նկատի ունենալով, որ արդեն իսկ նշված քրեական գործով սկսել է դատաքննության փուլը, իսկ առաջին ատյանի երկու դատարանների միջև առկա վեճը ենթակա է լուծման ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից (…)»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

6. Նախևառաջ հարկ է նշել, որ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ա.Գրիգորյանը որոշում է կայացրել քրեական գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին: Մինչդեռ, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարանների միջև ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումները կիրառվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահի նշանակման պահից: Մինչև նշված հոդվածի համապատասխան կարգավորումը կիրառվելը Վճռաբեկ դատարանում ստացված ընդդատության մասին համապատասխան վեճը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից՝ համապատասխան որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման կայացման օրվա դրությամբ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահը նշանակված չէ, ուստի ընդդատության մասին վեճը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից:

---

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 54-57:

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. թիվ ՀԿԴ/0037/01/22 (ԵԴ/0899/01/22) քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության, թե՞ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[3]:

10. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական*

---

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները չափազանց ձևական նկատառումներով հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, բացառությամբ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա գործերի, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ:*

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերի համաձայն՝ *«23. (…) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (…) կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:*

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված

գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ»:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի դատավորների միջև, եթե տվյալ գործերով անցում չի կատարվել դատաքննության փուլ»:*

Նշված նորմերից հետևում է, որ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև վերաբաշխելու կանոնից բացառություն են կազմում այն գործերը, որոնցով **անցում է** կատարվել դատաքննության փուլ:

14. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.2-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանը բավարարում է համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը, եթե առկա է սույն օրենսգրքի 375.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը, բացակայում են սույն օրենսգրքի 375.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանքները:*

2. Ամբաստանյալի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը կողմերի բանակցությունների համար սահմանում է առավելագույնը մեկամսյա ժամկետ (...)»:

Նույն օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարելուց հետո մեղադրողը համաձայնության գալու նպատակով բանակցություններ է սկսում ամբաստանյալի և նրա պաշտպանի հետ»:*

Նույն օրենսգրքի 375.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Համաձայնության մասին արձանագրությունն ընդունելուց հետո դատարանը որոշում է կայացնում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու մասին»:*

Նույն օրենսգրքի 375.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատաքննությունն սկսվում է մեղադրողի կողմից համաձայնության մասին արձանագրության հրապարակմամբ»:*

15. Սույն գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին որոշմամբ պատճառաբանել է, որ հիշյալ քրեական գործով անցում չի կատարվել դատաքննության փուլ, այսինքն՝ այն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին[6]:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ա.Գրիգորյանը, չհամաձայնվելով նշված դիրքորոշման հետ, գտել է, որ քրեական գործի քննությունը պետք է շարունակվեր Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, քանի որ քրեական գործով սկսվել է դատաքննության փուլը, հետևաբար գործը ենթակա չէր վերաբաշխման ՀՀ հակակոռուպցիոն դատարանին[7]:

Մինչդեռ, թիվ ՀԿԴ/0037/01/22 (ԵԴ/0899/01/22) քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հունիսի 28-ին կայացած դատական նիստի ընթացքում որոշել է *«դատական քննությունն անցկացնել համաձայնեցման կարգով»*, որից հետո գործի քննությունը հետաձգել է՝ **կողմերի միջև համաձայնության գալու նպատակով բանակցությունների համար**: Դրանից հետո բանակցությունների արդյունքներով կազմված համաձայնության մասին որևէ արձանագրություն չի ներկայացվել, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի ընդունվել և **դատաքննությունը** հատուկ

[6] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

կարգով անցկացնելու մասին որոշում չի կայացվել[8], հետևաբար սույն քրեական գործով անցում չի կատարվել դատաքննության փուլ:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-14-րդ կետերում շարադրված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է արձանագրել, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ, 24-րդ մասերի և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով թիվ ՀԿԴ/0037/01/22 (ԵԴ/0899/01/22) քրեական գործն ենթակա է վերաբաշխման ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Այսպիսով, գտնում եմ, որ թիվ ՀԿԴ/0037/01/22 (ԵԴ/0899/01/22) քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՀԿԴ/0037/01/22 (ԵԴ/0899/01/22) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Կարո Տիգրանի Ավանեսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 1-ին մասով ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

[8] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 20-21: